

## ԼԵՎՈՆ ԽԱԺԱԿՅԱՆ

### X—XIV ՊԱՐԵՐԻ ԹՊՂԹՅԱ ԶԵՄԱԳՐԵՐԻ ՊԱՏԱՌԻԿՆԵՐԻ ՖԻՂԻԿԱՅԻՄԻՄԻԿԱՆ ՎԵՐԱՌԻԾՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի X—XIV դարերի թղթյա ձեռագրերի և պատառիկների թղթի և թանաքի քիմիական բաղադրությունը ստուգելու նպատակով ֆիղիկաքիմիական անալիզի են Ենթարկվել մի քանի նմուշներ, պարզելու համար, թե ինչ հումքից են պատրաստվել թուղթն ու թանաքը և ժամանակի ընթացքում ինչ փոփոխությունների են Ենթարկվել<sup>1</sup>:

Հայտնի է, որ թղթի պատրաստման ամենահին կենտրոնները գտնվել են Արևելքում (Առաջավոր Ասիա, Միջին Ասիա, Չինաստան), որտեղ թուղթը պատրաստել են եղեգնից, թթի ծառի կեղեային հյուսվածքից, հին լաթերից, բամբակից<sup>2</sup>, Բնդունված կարծիք է, որ Հայաստան թուղթ բերվել է Արևելքից: Ստորև կտևնենք, որ ֆիղիկաքիմիական անալիզի արդյունքները հիմք են տալիս ենթադրելու, որ նշված դարերում թուղթ է պատրաստվել նաև Հայաստանում:

Ուսումնասիրվել են թղթի 11 և թանաքի 3 նմուշներ: Տվյալները բերված են № 1, 2, 3, աղյուսակներում: Զափումների և ստացված տվյալների քննարկման ու զնահատման ժամանակ մենք հանդիպել ենք որոշ դժվարությունների, որոնք ավելի զգալի էին դասնում մանավանդ այն պատճառով, որ մեր ձեռքի տակ չկար նախօրոք կատարված որևէ ուսումնասիրություն, որում քննարկված լինեին նույնչափ հին պատառիկների ֆիղիկաքիմիական անալիզի արդյունքները: Մեզ ժանոթ է միայն այն, որ 1889 թ. նևալուիտանական արքեպիսկոպոս Բարոննեն պրոֆեսոր Զինվանի Ֆրեդին ուղարկում է ձեռագրի մի կտոր, որը գրանցված է եղել որպես 1284 թ. բոմբիցին: Մանրաղիտակի տակ ուսումնասիրելուց հետո Ֆրեդը պարզում է, որ դա բոմբիցին չէ: Իսկ սա նշանակում է, որ թուղթը բամբակից չի պատրաստված եղել: Բայց Ֆրեդի աշխատանքը վերաբերում է միայն թղթի մազմզուկների ֆիղիկական և ոչ քիմիական կառուցին:

Մեր կատարած ֆիղիկիքամիական անալիզին դժվարություններ էր հարուցում նաև այն հանդամանքը, որ անցած հաղարամյակի ընթացքում փոշին, չուրը

<sup>1</sup> Հայերեն հնագույն ձեռագիրը (Մաշտոցի անվան մատենադարան, ձեռ. № 2679) իր հազարամյակը բռնորելու առիթով (գրված է, 981 թ.) հրատարակվելու է լուսատիգ նմանահանությամբ, վերծանությամբ և ուսումնասիրությամբ: Հարյուրամյակների ընթացքում թանաքը աստիճանաբար բայցալել է թուղթը: Նրանից առաջացած փոշին կուտակվել էր թերթերի թիկնամասում: Ավագ գիտաշխատող, ձեռագրագետ Ա. Մաթևոսյանը հրատարակության նախադարաստելու համար ձեռագիրը քանդելիս, հավաքված թանաքափոշին և բայցարված թղթի մասունքները, ինչպես նաև XІ—XІІ դարերի և Հաղրատի քարայրներում վերշերս հայտնաբերված XІІ—XІV դարերի թղթաւ ձեռագրերի պատառիկներից նմուշներ տրամադրեց մեզ, որոնց ֆիղիկաքիմիական անալիզի արդյունքները ներկայացվում են սույն հոգմածում:

<sup>2</sup> Բրիկեն (C. M. Briquet, Neue Quellen zur Papiergeschichte, Wien, 1888) պնդում է, որ թուղթը երբեք բամբակից չին պատրաստել: Կա նույնիսկ առաջարկում է թուղթ բառը գործածությունից հանել բոլոր այն լեզուներից, որոնցում թուղթ բառի արմատը վերցված է բամբակ բառից:

և ուրիշ աղտոտություններ ներծծվել էին անալիզի և նթարկվող նմուշների մաղմբ գուկների մեջ և ոչ մի կերպ հնարավոր շեր աղասիվել պրանցից: Փորձեցինք լվանալ տարրեր բնեուացում ունեցող լուծիչներով (ջուր, ացետոն, էթանոլ, քլորոֆորմ, դիքլորէթան, բենզոլ, քսիլոլ), բայց արդյունքները բոլոր դեպքերում չէ, որ գոհացուցիչ եղան: Նմուշներից մեկը բենզոլով լվանալուց հետո թողեց յուղի հետքեր: Մի քանի նմուշներ, որոնք ամենից շատ են վնասվել, կեղուու էին այնքան, որ սպեկտրների մեջ կլանման ախրույթները հնարավոր շեր հշտությամբ որոշել:

Քանի որ ուսումնասիրված նմուշների մեծ մասը մայր ձեռագրերից անջատված պատասիկներ են, դարերի ընթացքում ավելի են տուժել, քան կարող էին տուժել գրեթե կազմում համեմատաբար ավելի անվիաս տեսքով մեզ հասած թերթերը: Թանաքի նմուշները բայց այլած և խառնված են թղթի փոշիով: Չոր թանաքի հետ խառնվել են թղթի մազմզուկներ, որոնք մանրակրկիտ մաքրելուց հետո էլ ինչ-որ շափով մնացին թանաքի նմուշի մեջ: Այս ամենով հանգերձ՝ մի քանի նմուշներ, որոնց անալիզի արդյունքները բերում ենք ստորև, հնարավոր եղանք այնքան մաքրել, որ ստացված արդյունքները կարելի է հուսալի համարել:

### 1. Թանաքի անալիզի տվյալները:

Չորացած, գորշ գույնի փոշի: Ուսումնասիրված են երեք նմուշ. ա) 981 թվականից, բ) 1000 թվականից, գ) XII դարից:

Էլեմենտար անալիզի արդյունքներն են.

Առանց մնացորդի	Մնացորդով
Ածխածին	41,6%
Ջրածին	8,9%
Ազոտ	2,1%
Սծումբ	0,4%
Անօրգանական մնացորդ	74,2%

Աղյուսակ № 1

#### Առաքյան սպեկտրուլ անալիզի արդյունքները

Էլեմենտ	% նմուշ № 1	% նմուշ № 2	Էլեմենտ ճենում	% նմուշ № 1	% նմուշ № 2	Էլեմենտ	% նմուշ № 1	% նմուշ № 2
Si>	10(32)>	10 (21,6)	Nb	0,0038	0,0024	Yb	0,00075	0,0006
Al	7,5	9,0	Cu	0,048	0,085	La	0,008	0,0056
Mg	2,0	1,5	Pb	0,11	0,10	Ce	0,01	0,0065
Ca	4,5	5,5	Ag	0,0034	0,0035	Sr	0,03	0,033
Fe	2,4	2,5	Sb	0,009	0,015	Ba	0,15	0,13
Na	3,6	2,0	Bi	0,00044	0,06032	Li	0,01	0,0052
Mn	0,12	0,083	As	—	0,8	P	0,34	0,25
Ni	0,03	0,0031	Zn	0,034	0,026	Au	—	0,0043
Co	0,02	0,0018	Cd	0,0024	0,0015	Bce	0,0007	0,0008
Ti	0,16	0,3	Tl	0,003	0,0015	Sc	0,0025	0,0026
V	0,0068	0,0051	Sn	0,013	0,009	B	0,0052	0,0038
Cr	0,0086	0,01	Ge	0,00026	0,00047	Th	0,0056	0,0042
Mo	0,00044	0,0006	Ga	0,0019	0,0014	U	0,0005	0,0018
W	0,0036	0,002	In	—	0,00037			
Zr	0,026	0,036	Hg	0,032	0,0018			
			Yt	0,0344	0,0028			

ինֆրակարմիր սպեկտրալ անալիզի տվյալները:

Նյութերն ուսումնասիրված են մածուկի ձևով, վաղելինի յուղում:

Ուսումնասիրության տիրուցքը 700—3700 սմ

Կանման տիրուցքները՝ սմ -ով 725, 782, 805, 880, 1045 (շատ ուժեղ լայն կլանում), 1095, 1115, 1170, 1200, 1310, 1530, 1620—60 (լայն կլանում) 1735, 2630, 3180, 3000—3600 (լայն կլանում 3350 սմ — 1 մաքսիմումով):

Այս կլանումները ապացույց են հետևյալ խմբերի

Հալտնաբերված խմբեր	Ապացույց
հիդրոքսիլ (OH) հարավոր է թթվի—OH խումբը	3600—3000 սմ <sup>-1</sup> տիրութիւն լայն կլանում
երկրորդային ամիդ $\begin{array}{c} \text{N} \\   \\ \text{C} \\    \\ \text{O} \end{array}$	3180 սմ <sup>-1</sup> առացված «ցիս» դրոթյան N—H, 1620—60 սմ <sup>-1</sup> տիրութիւն լայն կլանումը կրկնակի կլանում է: 1660 (ամիդ II) և 1620 սմ <sup>-1</sup> (կրկնակի կառ) 1530 սմ և 1310 սմ <sup>-1</sup> կլանումները նույնական ապացույցում են երկրորդային ամիդի ներկայությունը:
կարբոնիլ C=O հավանական է թթվի C=O խումբը	1735 սմ <sup>-1</sup>
սիլիցիումի օքսիդ (SiO)	Շատ ուժեղ կլանումը 1045 սմ <sup>-1</sup> SiO-ի կլանումն է: 782, 880, 1115 սմ <sup>-1</sup> տիրութիւն կլանումները ապացույցում են, որ SiO խումբը մտնում է կավային սիլիկատների մեջ <sup>3</sup> :

Թանաքի բաղադրիչ մասերից մեկը կավային սիլիկատներն են, որոնք ինչպես հայտնի է, իսկական լուծույթներ չեն տալիս, այլ առաջացնում են կուլուիդ կախվածքներ (սուսպենզիա): Հավանական է այդ նյութերը թանաքին տվել են չծծվելու, շտարածվելու հատկություն, ինչպես նաև դարձրել են ավելի մածուցիկ: Բայց այդպիսի լուծույթում կավային խումբը շատ շուտ կնստեր հատակին: Այդ երեսույթը կարելի էր կանխել, եթե լուծույթին ավելացվեր սպիտակուցներ, սապոնիներ կամ այլ մակերեսային ակտիվ նյութեր: Հենց այդ նյութերն են, որ մոտ 25% ավելացվել են թանաքին: Այդ օրդանական նյութերի մեջ էլ կարող են եղած լինել ներկանյութերը:

Դժբախտաբար հիմա դժվար է որոշել, թե ինչ ծագում են ունեցել այդ նյութերը՝ կենդանական, թե՞ բուսական, բանի որ թե՛ երկրորդային ամիդը, թե՛ օրդանական թթուն, թե կրկնակի կտակերը, որոնք հայտնաբերվել են այդ թանաքում, հանդիպում են թե՛ մեկի, թե՛ մյուսի մեջ: Պետք է նկատի ունենալ նաև, որ անցած հաղարամյակում սկզբնանյութերը կարող էին շատ փոփոխվել և դառնալ անճանաչելի:

<sup>3</sup> И. И. Плюсина, Инфракрасные спектры силикатов. Изд-во МГУ 1967, стр. 92.

Սակայն քանի որ Հայկական գրավոր աղբյուրներում (ձեռագիր գեղագրքերում, թանաք պատրաստելու դեղատոմսերում, ձեռագրերի հիշատակարաններում, հիշատակագրություններում և այլուր) վկայում են, որ թանաքի պատրաստման հիմնական հումքը ստացվում էր տարբեր բույսերից, կարելի է պնդել, որ այդ նյութերը ոչ թէ կենդանական, այլ բուսական ծագում ունեն:

## 2. Թղթի անալիզի արդյունքները:

Թղթի բոլոր նմուշները՝ զեղնամոխրագույն երանգով, մակերեսը՝ մի փոքր անհարթ, էլաստիկ, 3—4 մմ երկարությամբ մազմղուկներով: Էլեմենտար անալիզի արդյունքները՝ միայն առաջին նմուշի համար (981 թ.):

Ածխածին	44,5%
Զրածին	5,9%
Աղուտ	1,45%
Մծուամբ	3,7%
Հալոգեններ չկան	
Անօրգանական մնացորդ	15,6%

Աղյուսակ № 2

Առարձան սպեկտրալ անալիզի արդյունքները միայն առաջին նմուշի համար (981 թ.)

Էլեմենտ	%	Էլեմ.	%	Էլեմ.	%	Էլեմ.	%	Էլեմ.	%
Si >	10(21)	Mo	0,0023	Cd	—	La	0,032	B	0,0096
Al	10,2	W	0,018	Te	—	Ce	—	Th	—
Mg	11,2	Zs	0,077	Tl	—	Sr	0,12	U	—
Ca	13,6	Nb	0,013	Sn	0,009	Ba	0,24		
Fe	5,4	Ta	—	Ge	—	Li	0,044		
Na	4,2	Cu	0,048	Ga	0,0028	P	2,6		
Mn	0,42	Pb	0,11	In	—	Au	0,0013		
Ni	0,0053	Ag	0,0072	Hg	—	Pt	—		
Ca	0,005	Sb	0,029	Yt	0,01	Be	0,0018		
Ti	0,36	Bt	0,0015	Yb	0,0018	Sc	0,0056		
V	0,0097	As	—						
Cs	0,025	Zn	0,0039						

Թղթի գույնը, մազմուկների երկարությունը, մակերեսի որոշ անհարթությունները, կալցիումի մեծ քանակությունը ապացուցում են, որ նմուշները պատրաստված են մինչև XIII դարը, քանի որ՝

### XIII դար

### XIII դարից հետո

1. Թղթի հումքը չի մշակվել մերենաներով, այլ պատրաստվել է ձեռքով, որից էլ մազմղուկները մնացել են համեմատարար երկար, 3—4 մմ<sup>4</sup>

2. 3—4 մմ երկարություն ունեցող մազմղուկներից ստացված բղրի մակերեսն անհար է:

Հումքը մշակվում է մետաղյա մերենաներով, որից մազմղուկները կարճանում են մինչև 0,1—1 մմ:

Ամենահարմար մազմղուկները 0,1—1 մմ երկարություն ունեն, որից ստացված թուղթը լինում է շատ հարթ:

<sup>4</sup> Բնդզրկության այն հատկությունները, որոնք սահմանափակված նմուշները:

թղթի դեղնավուն գույնը բացատրվում է կարբոնիլ խմբերի առկայությամբ, թեպետ՝ թղթի ստացման հնագույն մեթոդներով, երբ թղթի մասսան երկար ժամանակ եռացրել են բաց ամաններում, թուղթը կարող էր ստանալ դեղնավուն երանգ:

Աղյուսակ № 3-ում բերված են պատառիկների ինֆրակարմիր տիրուցի սպեկտրալ անալիզի արդյունքները: Բոլոր սպեկտրներում կարբոնիլ, հիդրօքսիլ խմբերից, կրկնակի կապից, C-H դեֆորմացիոն տատանումներից բացի 1, ԺԵ, Թ և Ց նմուշները (1-ին խումբ) ունեն  $1050 \text{ սմ}^{-1}$ ,  $980 \text{ սմ}^{-1}$  և  $730 \text{ սմ}^{-1}$  տիրուցիում կլանումներ, որոնք բացակայում են կամ թույլ են արտահայտված Զ և Ց (2-րդ խումբ) պատառիկների սպեկտրներում, իսկ վերջինների մոտ ուժեղ կլանումները գտնվում են  $1120 \text{ սմ}^{-1}$  և  $1170 \text{ սմ}^{-1}$  տիրուցիում:

Ինֆրակարմիր սպեկտրալ անալիզի տվյալներ ստացել ենք նաև կազմի կտորից հանված բամբակե թելից, որի կլանումները համընկնում են առաջին խմբի թղթի սպեկտրներին: Այսպիսով, թղթի նմուշների անալիզը ապացուցում է, որ գոյություն են ունեցել առնվազն 2 տեսակ թղթեր, որոնք իրարից տարբերվում են կլանման որոշ տիրուցիումներով:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ թե՛ թանաքի ( $981 \text{ թ.}$ ), և թե՛ № 1 նմուշի պատառիկի ( $981 \text{ թ.}$ ) առաքման սպեկտրներում կապարի բանակը նույնն է —  $0,10$  և  $0,11\%$ : Դա նշանակում է, որ երկուսն էլ պատրաստված են եղել աշխարհագրական նույն շրջանում: Եթե ընդունենք, որ թուղթը բերել են գրչի մոտ ուղիղ տեղեղից, պետք է ընդունենք, նույնպես, որ թանաքն էլ բերել են թղթի հետ, բայց թանաքի ներմուծումը ոչ միայն անհարմար է, այլև, երեսի, անիմաստ (շորանալուց հետո թանաքը վերականգնելը դժվար է): Թանաքը պետք է պատրաստվի գրչի մոտ, եթե ոչ՝ անմիջապես գրչի ձեռքով: Այստեղից՝ թե՛ թուղթը, թե՛ թանաքը պատրաստել են այնտեղ, որտեղ աշխատել է գրիչը:

Ինչպես վերևում ասացինք, առաջին խմբի սպեկտրները համընկնում են կազմի կտորից հանված բամբակե թելի սպեկտրին<sup>5</sup>: Թեպետ Բրիկեն մերժել է այն կարծիքը, որ առաջներում թուղթ պատրաստել են նաև բամբակից, բայց մեր տվյալները թույլ են տալիս վերապահումով մոտենալ Բրիկեի կարծիքին և ննթաղրել, որ առաջին խմբի պատառիկները կարող էին պատրաստված լինել բամբակից: Այդ կարծիքն, իհարկե, դեռ ճշտման կարիք ունի:

### Եզրակացություն.

1. Պատառիկների առաջին խումբը, գրքի կազմից հանված բամբակե թելը, թանաքը պատրաստվել են աշխարհագրական նույն շրջանում:

2. Քանի որ գրիշը աշխատել է Հայաստանում, հետեւը թանաքը, բամբակե թելը և թղթերի առաջին խումբը հավանաբար նույնպես պատրաստված են Հայաստանում: Այս կարծիքը հաստատվում է նաև համեմատելով էլե-

<sup>5</sup> H. W. Grietz, and Mc. Person, J. Svensk. Papierstidning, 59, 1956, 93 L. Chadej von Bill. Assoc. Tech. Ind. papier 1, 1954, 28—30.

<sup>6</sup> Այլ թղթի սպեկտրը նշան է բամբակի սպեկտրին, բավական է համեմատել ստացված արդյունքները գրականության մեջ հայտնի օրինակի հետ: Տե՛ս R. Г. Жбанов, Инфракрасные спектры целлюлозы и его производных. Минск, 1964, изд-во АН БССР, стр. 225, спектrogramma № 54.

$b, d, \alpha, \epsilon, 2$		$\eta_I \mu \bar{\nu} \bar{d} d \bar{s} s \bar{u} u \bar{b} b \rho \bar{\nu} \bar{u} u \bar{d} - 1 - \alpha q^2$									
$I.$	$b$	3500 3000	1720 1715	1640 1640	1465 1465	1310 1310	1115 1115	1060 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1030 $\rho.$ $\alpha \epsilon J.$	980 $\rho.$ $\alpha \epsilon J.$	730
$\rho$	$\rho$	3500 3000	1720 1715	1640 1640	1470 1465	1315 1310	1160 1160	1120 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1060 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1025 $\rho.$ $\alpha \epsilon J.$	990
$\rho$	$\rho$	3500 3000	1715 1715	1640 1640	1465 1470	1310 1310	1160 1160	1115 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1060 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1025 $\rho.$ $\alpha \epsilon J.$	990
$\rho$	$\rho$	3500 3000	1720 1720	1645 1645	1470 1470	1310 1310	1160 1160	1120 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1060 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1025 $\rho.$ $\alpha \epsilon J.$	985
$\rho$	$\rho$	3600 3000	1720 1720	1645 1645	1470 1470	1310 1310	1160 1160	1120 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1055 $\rho.$ $\alpha \epsilon J.$	1025 $\rho.$ $\alpha \epsilon J.$	985

\* У більшості сучасних ресурсів збереглися підсумки дослідження відносин між земельною політикою та економічними показниками.

մենտների հարաբերական քանակությունները, որ բերված են № 1 և 2 աղյուսակներում, թղթի և թանաքի համար: Հարաբերությունը մոտավորապես համընկնում է էլեմենտների տարածվածությանը Հայաստանում: Կասկածելի է միայն անագի մի փոքր ավել քանակությունը, թեպես հնարավոր է, որ աշխարհագրական համեմատարար փոքր տարածքում, որտեղից վերցրել են թղթի և թանաքի հումքը, էլեմենտներից որևէ մեկի հարաբերական քանակը լինի ավել կամ պակաս, քան հարևան շրջաններում:

3. Պատառիկների 2-րդ խումբը, որի քիմիական կառույցը չի համընկնում օժանդակ նյութերի (թանաք, կազմի կտոր) կառույցին, հավանական է բերված է ուրիշ երկրներից<sup>7</sup>:

Ինֆրակարմիր սպեկտրներն ստացվել են Յեյս Ֆիրմայի UR-20 սպեկտրոֆորումետրով, նմուշները պատրաստվել են քսուկի ձևով, վաղելինի յուղում, ներքին լրիվ անդրադարձման և կալիումի բրոմիդի հետ ճնշման տակ թերթիկներ ստանալու մեթոդներով:

Չափումները կատարվել են՝

առաքման սպեկտրները—ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանության ինստիտուտի սպեկտրալ լաբորատորիայում, ղեկավար Երկրաբանական գիտ. թեկնածու Գևորգ Մկրտչյան:

Օրգանական անալիզ—ՀՍՍՀ ԳԱ նույր օրգանական քիմիայի ինստիտուտի անալիտիկ լաբորատորիայում, ղեկավար Աղքանիկ Գրիգորյան:

Ինֆրակարմիր սպեկտրներ—ՀՍՍՀ ԳԱ նույր օրգանական քիմիայի ինստիտուտի ֆիզիկական քիմիայի բաժին, ղեկավար քիմ. գիտ. թեկնածու Լևոն Խաժակյան:

Վերջում մեր պարտքն ենք համարում շնորհակալություն հայտնել Մատենադարանի ավագ գիտաշխատակից, բանասիրական գիտությունների ուկտոր Գևորգ Արգարյանին հողվածի մտահղացման, մանրամասն քննման և ճշտման համար:

## Լ. ԽԱԺԱԿՅԱՆ

### РЕЗУЛЬТАТЫ ФИЗИКО-ХИМИЧЕСКОГО АНАЛИЗА ФРАГМЕНТОВ РУКОПИСЕЙ X—XIV ВВ.

#### (Р е з ю м е)

В статье представлены результаты физико-химического анализа фрагментов древнейших армянских бумажных рукописей, хранящихся в Матенадаране им. Маштоца, в частности остатков и чернильного порошка рукописи № 2679, написанной в 981 г. Физико-химич. анализ показывает, что как чернила, так и бумага (X—XII вв.), были изготовлены в одном и том же географическом регионе, вероятно в Армении. Это мнение подтверждается также изучением относительной распро-

<sup>7</sup> Մեզ տրամադրված նմուշները համարակալված են 1.Ա.-ԺԱ.-Հերթականությամբ, առանց ժամանակը նշանակելու:

Անալիզի արդյունքները ներկայացնելինս, պարզվեց, որ առաջին խմբի մեջ ընդուրկված պատառիկները X—XIII դարերից են, երկրորդ խմբինը՝ XIV դարից:

странныности элементов, приведенных в табл. № 1 и 2 для бумаги и чернил, и тем, что данные фрагменты могли быть изготовленными из хлопка.

L. KHAJAKIAN

RESULTATS DE L'ANALYSE PHYSICO-CHIMIQUE  
DE FRAGMENTS DE MANUSCRITS EN PAPIER DES  
X<sup>e</sup>-XIV<sup>e</sup> SIECLES

(Résumé)

L'article expose les résultats de l'analyse physico-chimique de fragments des plus anciens manuscrits en papier conservés au Maténadar ran Machtots, en particulier de restes et de la poudre d'encre du manuscrit no. 2679, écrit en 981.

Les analyses ont montré que l'encre et le papier (X<sup>e</sup>-XII<sup>e</sup> siècles) ont été préparés dans une même région géographique, probablement en Arménie. Cette opinion est confirmée également par l'étude de l'extension relative des éléments donnés dans les tables nos. 1 et 2 pour le papier et l'encre et par le fait que ces fragments ont pu être fabriqués à partir de coton.